ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 2 » սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-32/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22118-15 գրությամբ ներկայացված «Բանաձև» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00449399) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.08.2015թ. թիվ 1/73-1/22118-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Բանաձև» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար՝ կից ներկայացնելով

ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.08.2015թ. թիվ 18/6-57-56 գրության և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները:

2. «Բանաձև» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, կարծիք ստանալու նպատակով, 26.08.2015թ. թիվ 01/04.1/2212-15 գրությամբ դիմել է «Բանաձև» ՍՊԸ-ին:

«Բանաձև» ՍՊԸ-ն 08.09.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերությունն ընդամենը մի ամիս է, ինչ գրանցված է Գնումների աջակցման կենտրոնում և ՀՀ քննչական կոմիտեի հետ 07.04.2015թ. կնքված «ՇՀԾՁԲ-11/4-ՀՀՔԿԴ-15/4-1» ծածկագրով պայմանագիրն (այսուհետ նաև՝ Պայմանագիր) Ընկերության համար առաջինն է եղել և, որ հենց առաջին իսկ համագործակցությունն Ընկերության համար բավականին ցավոտ է եղել: Պայմանագիրը կնքելուց և աշխատանքները ստանձնելու համար առաջին իսկ հանդիպումից հետո պարզ է դարձել, որ ՀՀ քննչական կոմիտեի հրավերում նշված չեն եղել մի քանի կարևորագույն հանգամանքներ:

Ընթացակարգի առարկան ֆիլմարտադրությունն է եղել, սակայն Ընթացակարգի առաջարկում նշված չի եղել, որ ֆիլմում պետք է տեղ գտնեն խաղարկային մասեր, ներգրավված լինեն դերասաններ, ինչպես նաև պետք էր ընտրել ու կահավորել հատուկ սրահներ: Ֆիլմերի ընդհանուր տևողությունը ոչ թե 30 րոպե է, այլ պահանջվում էր առնվազն 45 րոպե:

Ընկերությունը հայտնել է, որ «ՇՀԾՁԲ-11/4-ՀՀՔԿԴ-15/4-1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրել է գնային առաջարկ՝ հաշվի առնելով շուկայում ընդունված միջինացված գները հեռուստատեսային և ուսուցողական ֆիլմեր արտադրելու համար՝ հաշվի առնելով նմանատիպ ուսուցողական ֆիլմերի արտադրության նախադեպերը: «Բանաձև» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ չի կարողացել նախօրոք հաշվարկել ՀՀ հատուկ քննչական կոմիտեի կարիքները, ինչպես նաև չի տապալել Պայմանագիրը: Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծվել է՝ ժամկետները խախտելու հիմքով, մինչդեռ Պայմանագրով նախատեսված որևէ ժամկետ խախտված չի եղել: Օգոստոս ամսի դրությամբ, Ընկերությունն ավարտել է 4 մասերից երկուսի սցենարական աշխատանքը, որն ուսուցողական ֆիլմերի դեպքում

ամենածանր ու պատասխանատու փուլն է: Օգոստոս ամսվա կեսից արդեն որևէ կերպ հնարավոր չի եղել կապնվել Պատվիրատուի հետ: Մինչդեռ հենց օգոստոս ամսին էին նախատեսված այդ նկարահանումները:

Ընկերությունը գրությամբ ընդունել է, որ ողջ պատասխանատվությունն իրենց վրա է և պարտավոր էին ճշտել Ընթացակարգի մանրամասները: Սակայն ճշգրտումների համար նախատեսված ժամկետում մանրամասներ ստանալու փորձերն անցել են ապարդյուն: Ընկերությունը հայտնել է, որ պատրաստ է նորից մասնակցել ՀՀ քննչական կոմիտեի կողմից հայտարարված նոր ընթացակարգերին՝ արդեն շտկված բյուջեով և համաձայնեցված ժամանակացույցով:

Ընկերության ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում 07.12.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ հրավերի տեխնիկական բնութագիրը հստակ չի եղել, հետևաբար «Բանաձև» ՍՊԸ-ի կողմից ծառայությունը պատշաճ չի մատուցվել:

3. ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ քննչական կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 14.08.2015թ. թիվ 18/6-57-56 գրությամբ ներկայացրել է Պատվիրատուի և «Բանաձև» ՍՊԸ-ի միջև 07.04.2015թ. կնքված «ՇՀԾՁԲ-11/4-ՀՀՔԿԴ-15/4-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուի ներկայացուցիչը մասնակցելով Կենտրոնում 07.12.2015թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ Ընկերությունը Պայմանագրով պարտավորվել է 2-րդ եռամսյակի ընթացքում հանձնել 2 ֆիլմ, սակայն մինչ օրս նույնիսկ մեկ ֆիլմի սցենար ՀՀ քննչական կոմիտեին չի հանձնել, ինչի արդյունքում Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

4. ՍՑ-ԳԲԽ-32/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22118-15 գրությամբ «Բանաձև» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քննչական կոմիտեի և «Բանաձև» ՍՊԸ-ի միջև 07.04.2015թ. կնքվել է հեռուստատեսային և ռադիոհեռարձակման ծառայությունների ձեռքբերման «ՇՀԾՁԲ-11/4-ՀՀՔԿԴ-15/4-1» ծածկագրով պայմանագիր:

2. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված «էլեկտրոնային ուսուցման ծրագրային ֆիլմերի պատրաստում և թողարկում» գնման առարկան նախատեսվել է գնել 2015թ.-ի 2-րդ եռամսյակում՝ 2 հատ, 3-րդ եռամսյակում՝ 2 հատ (ընդամենը՝ 4 հատ) քանակությամբ:

3. Պատվիրատուն 05.08.2015թ. «Բանաձև» ՍՊԸ-ին ուղղված թիվ 8/8-127-15 գրությամբ հայտնել է, համաձայն Պայմանագրի հավելված N 2-ի՝ Ընկերությունը պարտավորվել է 2-րդ եռամսյակի ընթացքում Պատվիրատուին հանձնել 2 ֆիլմ: Մինչև օրս Ընկերության կողմից անգամ մեկ ֆիլմի սցենար չի ներկայացվել, ինչի արդյունքում հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը: Պայմանագիրը միակողմանի լուծելու հետևանքով Ընկերության կողմից ենթակա են վճարման Պայմանագրով նախատեսված տույժերն ու տուժանքները:

Պայմանագիրը համարվում է լուծված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունն Ընկերության կողմից ստանալու պահից:

4. Պատվիրատուն 08.12.2015թ. թիվ 18/6-103-15 գրությամբ դիմել է «Բանաձև» ՍՊԸ-ին և հայտնել, որ համաձայն ՀՀ քննչական կոմիտեի և «Բանաձև» ՍՊԸ-ի միջև 07.04.2015թ. կնքված «ՇՀԾՁԲ-11/4-ՀՀՔԿԴ-15/4-1» ծածկագրով պայմանագրի՝ ՀՀ քննչական կոմիտեի կողմից միակողմանի լուծելու վերաբերյալ 05.08.2015թ. թիվ 8/8-127-15 գրությամբ Ընկերությանը տեղեկացվել է, որ անհրաժեշտ է մինչև 2015թ. դեկտեմբերի 15-ը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005000758 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 5.3 կետով սահմանված տույժը 35 օրվա համար՝ 48125 ՀՀ դրամ, պայմանագրի ապահովման գումարը՝ 550000 ՀՀ դրամ (ընդամենը՝ 598125 ՀՀ դրամ), և վճարման հանձնարարականը ներկայացնել ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ:

5. ՀՀ քննչական կոմիտեն 10.02.2016թ. 18/8-04-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «Բանաձև» ՍՊԸ-ի կողմից որպես պայմանագրի ապահովում 550000 ՀՀ դրամ գումարը և Պայմանագրի 5.3 կետով 35 օրվա համար սահմանված 48125 ՀՀ դրամի չափով տույժը (ընդամենը՝ 598125 ՀՀ դրամ) վերականգնվել է՝ կից ներկայացնելով նշված գումարների վճարումը հավաստող 14.12.2015թ. N 000157 և N 000156 վճարման հանձնարարագրերի պատճենները:

5. ՍՑ-ԳԲԽ-32/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներ-կայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22118-15 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, «Բանաձև» ՍՊԸ-ի 08.09.2015թ. գրությունը, ՀՀ քննչական կոմիտեի 05.08.2015թ. թիվ 8/8-127-15, 08.12.2015թ. թիվ 18/6-103-15 և 10.02.2016թ. 18/8-04-16 գրությունները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն Պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է նույն

Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բազմիցս խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով, Ընկերությունը Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ժամկետում՝ 2015թ.-ի 2-րդ եռամսյակում՝ 2 հատ և 3-րդ եռամսյակում՝ 2 հատ «էլեկտրոնային ուսուցման ծրագրային ֆիլմերի պատրաստում և թողարկում» ծառայությունը չմատուցելով՝ Պայմանագրի շրջանակներում թույլ է տվել մեկից ավելի անգամ պայմանագրով նախատեսված պարտավորությունների՝ ժամկետների խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ «Բանաձև» ՍՊԸ-ի վերաբերյալ դեռևս առկա է Ցուցակում ներառելու միայն մեկ հիմք, այն է՝ ***Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված և վերջինիս վերագրվող խախտման առկայությունը,*** սակայն Ընկերությանը Ցուցակում ներառելու մասին որոշումը կարող է կայացվել միայն երկրորդ պարտադիր հիմքի՝ ***խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից հայտ ներկայացնելու հանգամանքի*** ի հայտ գալու պայմաններում: Մինչդեռ, մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելը՝ Կենտրոնը չունի որևէ տեղեկատվություն Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից (05.08.2015թ.) մեկ տարվա ընթացքում գնման որևէ գործընթացին հայտ ներկայացրած լինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև վերոհիշյալ եզրակացությունը ՍՑ-ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովին տրամադրելն առկա չէ որևէ տեղեկատվություն «Բանաձև» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 05.08.2015թ.-ից հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ինչը հանդիսանում է մասնակցին

Ցուցակում ներառելու մասին որոշում կայացնելու համար երկրորդ պարտադիր պայմանը, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 18.08.2015թ. թիվ 1/73-1/22118-15 գրությամբ ներկայացված «Բանաձև» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00449399) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-32/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան